

## ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

### ՀԱՅԵՐԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ.\*)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԵԴՕԹ.—ԹԻԻՐՔԱԿԱՆ ԳՈՐԾ.

«Պատմութիւնն այդպիսի մարդագոհների (hécatombe) էջեր չունի արձանագրած. նա լռում է այդ մասին. քիչ է մնում հաւատ ընծայենք, թէ սուլթան Աբդուլ-Համիդի թագաւորութեան ժամանակ Հայերն աւելի բաղդաւոր էին: Բաբերդի առաջնորդ գեր. Տ. Անանիա եպիսկ. Հաղարապետեանը կախաղան բարձրացաւ նոյն իսկ առաջ, քան կենդրոնական կառավարութիւնը նորա դատավճիռը կհաստատէր: Խարբերդի առաջնորդ գեր. Տ. Պսակ եպիսկոպոս Տէր-Խորէնեանը մայիսին՝ քաղաքից աքսորուեցաւ, սակայն հազիւ քաղաքից ոտքը դուրս էր դրել, որ անտանելի տանջանքներով սպանուեցաւ: Միւս առաջնորդների մասին և ոչ մի տեղեկութիւն: Աւելորդ է խօսել նոյն իսկ նահատակուած և խոշտանգուած քահանաների մասին: Երբ ժողովուրդն արտագաղթի ելաւ, եկեղեցիները կողոպտուեցան և մզկիթների վերածուեցան, իսկ շատ տեղ ախոռներ դարձրին: Կ. Պոլսում, օրը ցերեկով, յայտնապէս վաճառում էին եկեղեցական սրբազան անօթներ ու գոյք և թիւրքերը չքաշուեցան նոյն իսկ Պօլիս բերել դժբաղդ Հայ մայրերից խլուած տղայ ու աղջիկներին:

«Կիլիկիայի ժողովուրդն աքսորուած էր Հալէպ, Դամասկոս, ուր նոքա անշուշտ քաղցից կկոտորուեն: Կառավարութիւնը, նոյն իսկ չէ կամեցել իրենց տեղերը թողնել Հալէպի և Ուրֆայի փոքրաթիւ Հայ գաղութները,

\*) Տեա «Արարատ» Յունուար-Փետրուար ամիսների №, էջ 65—86.

«րպէսզի հնարաւորութիւն չունենան դէպի Հարաւ ար-  
սորուող իրենց արիւնակից դժբաղդ եղբայրներին օգնու-  
թեան ձեռք մեկնելու:

«Կառավարութեան նպատակն ու ծրագիրն է եղած,  
անկասկած, մի անգամ ընդ միշտ վերջ դնել Հայկական  
հարցին,—մի անգամից գաղթեցնելով Հայերին վեց վիլա-  
յէթներէից և Կիլիկիայից: Դժբաղդաբար, այդ ծրագիրը  
շատ աւելի լայն և շատ աւելի արմատական է,—այն է  
բնաջինջ անել ամբողջ Հայ ազգաբնակչութիւնը գլխովին,  
ամբողջ Տաճկաստանում: Եւ այդ ծրագիրը սկսուեց գոր-  
ծադրուել մինչև իսկ Կ. Պօլսի, նորա արուարձաններում  
և յարակից վայրերում: Իզմիտի գաւառի և Բրուսայի վի-  
լայէթում, Ադա-Բազարում Գէյվէյում, Արմաշում ապրող  
Հայերի մեծամասնութիւնը ուժով ուղարկուած են Մի-  
ջագետք, երեսի վրայ ձգելով իրենց պապենական օջախ-  
ները և հայրենի ժառանգութիւնը:

«... Կ. Պօլսում, ժողովուրդը ահռելի սարսափի մէջ,  
րոպէ առ րոպէ սպասում է իւր մահապարտութեան վճռի  
կատար ածելուն: Ձերբակալուածներն անհաշիւ են և բըռ-  
նուածները իսկոյն դուրս են քշում մայրաքաղաքներից.  
ամենայն հաւանականութեամբ մեծամասնութիւնը կղրկուի  
Լեանքից: Առ այժմ գաւառացի, բայց Կ. Պօլսում հաս-  
տատուած, ականաւոր առևտրականներն են, որ քշում են  
մայրաքաղաքից...»:

Այժմ մի այլ քաղուածք մի ուրիշ գրութիւնից, որ  
աւելի անձնականի կնիք է կրում և որ աւելի է գուժ  
շարժում և աւելի զայրոյթ առաջ բերում: Այստեղ առաջ  
է բերուած, 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915 թ. ապրիլ  
ամիսը Կարնում գործող Գերմանական Կարմիր-Խաչի ճիւղ  
կազմող Deutsch Militärmission-ի մէջ գործող երկու հիւան-  
դասան քոյրերի անձնական տպաւորութիւնները: Դոցանից  
մէկը, օրիորդ Flora A. Wedel-Yarlsberg Նորվեգիայի  
ականաւոր մի ընտանիքի անդամն է: Ցաւում ենք, որ չենք  
կարող ամբողջապէս առաջ բերել այդ վաւերագիրը, այլ  
պիտի բաւականանաք հատ ու կտորներով, որ Գերմանա-

ցիք, անշուշտ, չեն կարող չընդունել: \*)

« . . . 1915 թ. մարտ ամսին, մի հայ բժշկից տեղեկացանք, որ յետոյ վախճանուեցաւ տիֆից, թէ կառավարութիւնը մի մեծ ջարդ է պատրաստում . . . Կարնոյ Գերմանական հիւպատոսի միջոցով, որ Հայերի համակրութիւնն էր վայելում նոյնպէս, մենք հրաւիրուեցանք Երզնկայի Կարմիր-Խաչի կողմից և այնտեղ աշխատեցինք եօթ շաբաթ:

« . . . Ասլա, Երզնկայի ազգաբնակութեանը եօթն օր ժամանակ տուին իւր ստացուածքն ու ինչքը վաճառելու համար, որ բնականաբար, շատ վարնոց գներով կատարուեցան: Յունիսի առաջին շաբաթուայ մէջ առաջին գաղթախումբն ելաւ . . . Մի Հայ զինուոր, որ մեր կօշկակարն էր, ասաց քոյր X-ին . . . «Այժմ ես քառասուն և վեց տարեկան եմ, բայց և այնպէս ինձ էլ են զինուոր վերցրել, չնայելով որ ամէն տարի իմ զինուորական ծառայութիւնից ազատուելու հարկը վճարել եմ: Երբէք կառավարութեան գէմ որ և է բան չեմ արել, բայց և այնպէս իմ ամբողջ ընտանիքս խլել են ձեռքիցս, — մայրս, որ եօթասնասուն տարեկան է, կինս և հինգ երեխաս և չգիտեմ նոյն իսկ ուր են տանում նոցա»: Նա ողբում էր մանաւանդ մէկ ու կէս տարեկան իւր աղջկան համար, «Այնքան գեղեցիկ է նա, այնպիսի սիրուն աչքեր ունի»: Եւ նա լալիս էր ինչպէս մի փոքրիկ երեխայ . . . Հետեւեալ օրը նորից եկաւ. «Իմացայ, ամենքին էլ սպանել են»: Մեր թիւը խոհարարը լալով պատմեց մեզ, որ Քիւրդերը Քեմալ-Բողազում\*\*) յարձակուել են խեղճ գաղթախմբի վերայ, ամենքին կողոսկտել և շատ շատերին սպանել:

\*) Այս պատմութիւնն in extenso առաջ է բերուած վերջերս հրատարակուած մի գրքոյկի մէջ, այն է Quelques documents sur le sort des Arméniens en 1915, հրատարակուած Հայերին օգնող Միութեան Յանձնաժողովի կողմից (Genève, Société Générale d'imprimerie).—

\*\*) Երզնկայից 12 ժամուայ հեռաւորութեամբ, դէպի Եփրատը տանող մի նեղ անցք, փակուած ժայռերի և գահավէժների մէջ: Մ. հ. ք.

«... Ձինուները մեզ պատմում էին, թէ ինչպէս այդ անգէն դժբաղդ արարածներին սպանում էին: Այդ գործը կատարելու համար պէտք է եղել ամբողջ չորս ժամ: Կանայք ծունկ չոքած աղաչում էին. խեղճերն իրենց երեխաներին եփրատն էին ածել... Բարեկեցիկ մի զինուոր ասում էր—«Սոսկալի էր տեսարանը. ես չէի կարող հրացանի բռնել նոցա. այնպէս էի անում, իբր թէ նշան եմ բռնում...»: Մենք յաճախ ենք լսել Թիւրքերի զայրոյթն ու սրտնեղութիւնն այդ առթիւ: Պատմում էին, որ կային բազմաթիւ կանխօրէն պատրաստած եզան սայլեր, որպէս զի սպանածների դիակները տանէին գետը ձգէին, կոտորածի հետքերը ջնջելու համար:

«Այդ րոպէից սկսած, անդադար, արտաքսուած Հայերի կարաւաններ էին, որ գալիս էին. սրանց ամենքին էլ տանում էին մորթոտելու... զոհերից շատ շատերի ձեռքերը կապոտում և ժայռերի գլխից գետն էին գլորում: Այդպէս էին վարւում, երբ ամբոխն այնքան մեծաքանակ էր, որ նոցա այլապէս բնաջինջ անելու հնար չկար:

«... Քոյր X-ը... և ես որոշեցինք գաղթախմբերից մէկին ուղեկցել մինչև Խարբերդ: Մենք դեռ ևս տեղեկութիւն չունէինք, թէ ճանապարհներին կոտորելու հրամանը տուած էր կառավարութիւնից, ուստի և կարծում էինք, որ զինուորների և զինայրների կոպտութիւններն արգելել կկարողանայինք և կարող կլինէինք խանգարել Քիւրդերի յարձակումը, որոնց լեզուն հասկանում էինք և որոնց վերայ ազդեցութիւն ունէինք:

«Հեռագրեցինք Կարնի հիւպատոսին, որ մենք հիւանդանոցից արձակուած ենք և խնդրեցինք Գերմանական շահերի տեսակէտից գալ Երզնկա: Պատասխանեց. «Հնարաւորութիւն չունիմ պաշտօնավայրս թողնել, սպասում եմ Աւստրիացիների, որոնք յունիսի 22-ին պիտի անցնեն այստեղից...»:

\*) Յունիսի 11-ի երեկոյեան տեսանք բազմաթիւ զինուորներ, որ աւար շալակած յետ էին դառնում: Թիւրքերն ու Հայերը պատմում էին, որ ճանապարհի վերայ ցրուած էին բազմաթիւ մանկական դիակներ:

«... Յունիսի 17-ի երեկոյեան մի զինայր պատմեց մեզ, թէ մեզնից մի տասը ըռպէի հեռաւորութեամբ կանգնեցրել են մի գաղթախումբ, որոնց դուրս են քշել Բաբերդից: Նա պատմեց մեզ, սիրտ կտրատող ձայնով, թէ ինչպէս տղամարդոց, մէկ-մէկ կոտորել են և կիրճը լցրել: Սպանեցէք, ջարդեցէք, քշեցէք և վայր գլորեցէք» աղաղակներով. թէ ինչպէս իւրաքանչիւր գիւղ հասած ժամանակ բռնաբարում էին կանանց, ինչպէս ինքն ևս կամեցել էր ձեռք ձգել մի մատաղահաս աղջիկ, բայց իրեն ասել էին, թէ դա այլ ևս կոյս չէ. թէ ինչպէս էին ջարդոտում փոքրիկների գլուխները, երբ նոքա ձայն էին հանում, կամ լալիս, կամ յետ մնում: «Ինքս երեք մատաղահաս կոյս, մերկ-մերկ հողի մէջ թաղեցի, մի բարի գործ կատարելու համար» եղաւ նորա պատմութեան վերջականը:

«Հետեւեալ առաւօտեան սպասեցինք մեծ գաղթախմբի անցնելուն, որ պիտի գար անցնէր Երզնկա տանող մեծ ճանապարհով: Դա մի մեծ խումբ էր, մէջները երկու երեք տղամարդ, մնացածը կսնայք ու երեխաներ: Կանանցից շատերը խելագարի տպաւորութիւն էին թողնում: Նոքա գոռում էին—«Ազատեցէք մեզ, միւսիւլման կամ գերմանացի կղառնանք, կամ ինչ կուզէք կլինենք, միայն փրկեցէք մեզ...»: Ուրիշները լուռ էին և մէջքներին առած պարկեր կամ կապոցներ կամ իրենց փոքրերին շալակած կամ գրկած քայլում էին անտարբեր համբերատարութեամբ: Մի քանիսը աղերսում էին մեզ ազատել իրենց փոքրիկներին: Թիւրքերից շատերը գալիս էին տանելու տղաներ կամ մատաղ կոյսեր առանց ծնողների համաձայնութիւնն ստանալու: Ամենևին ժամանակ չկար խորհելու, որովհետև հեծեալ զինայրերն անդադար առաջ էին վանում ամբոխը՝ նոցա գլխին տեղալով մտրակի հարուածներ և փայտեր ճօճելով: Բաղաքի մուտքի առաջ... կարծէք գերեվաճառքի շուկայ լինէր. մենք ինքներս էլ վերցրինք վեց երեխայ երեքից—տասնեւչորս տարեկան, որ կպել էին մեզ և բաց չէին թողնում... Յաւի ու յուսահատութեան

աղաղակներով թշուառականների խումբը ճանապարհը շարունակեց, այն ինչ մենք դարձանք մեր հիւանդանոցը մեր վեց երեխայի հետ: Բժիշկ Ն-ը.... թոյլ տուեց պահպանել նոցա և տեղաւորել մեր սենեակում.... Ամենից փոքրիկը, Բաբերդի մի հարուստ վաճառականի զաւակ, թագնուած իւր մօր վերարկուի մէջ, աչքերն ու դէմքը արտասուքից սառած, չէր կարողանում սփոփուել և հանգստանալ: Յանկարծ ցատկելով պատուհանի վերայ, մատով ցոյց է տալիս մի զինայր և ճւղճում. «սա է, ա՛յ, որ հօրս սպանեց...»:

«....Ապա մենք ձի հեծած քաղաք գնացինք, որպէս զի այս փոքրերի հետ անարգելք ճանապարհորդելու արտօնութիւն ստանանք: Մեզ ասացին, որ իշխանաւորները խորհրդի էին նստած՝ նոր հասած գաղթախմբի վիճակը տնօրինելու համար... Կէս գիշերին, յանկարծ, մեր դուռն ամուր գարկել սկսեցին և հարցրին, արդեօք այստեղ երկու գերմանուհի են ապրում: Ապա ամեն ինչ լռեց, մեր փոքրիկներին մեծ բաւականութիւն և հանգստութիւն պատճառելով: Նոցա առաջին հարցն այն էր, թէ մենք կարգելէ՞նք որ նոցա միւսիւլման չը դարձնեն և թէ մեր խաչը (ցոյց տալով հիւանդապահ քոյրերի կրած կարմիր-խաչը) նոյնն է արդեօք, ինչ որ իրենցը: Մեր դրական պատասխանից յետոյ միայն նոքա հանգստացան... Մեր հիւանդանոցի Հօջան (թուրք մօլլան) մեզ մօտ մտնելով ասաց. «Եթէ Ալլահն ինքը չի խնայում նոցա, ինչու ենք մենք կարեկցում և օգնում նոցա: Հայերը սարսափելի անգթութիւններ են կատարել Վանում: Եւ այս բոլոր դժբախտութիւնն եկել է նոցա գլխին, որովհետեւ նոցա կրօնը էֆասիֆ է (վարնոց տեսակի) է: Միւսիւլմանները չպէտք է հետևէին նոցա օրինակին, այլ պէտք է ջարդերը կազմակերպէին աւելի զթաւէր և մարդասէր եղանակով....»:

«....Այնուհետեւ մենք գնացինք նոյնիսկ միւթէսէ-րէճի մօտ: Այդ մարդը մի կատարեալ մարմնացումն էր գլխի և իւր վարմունքը կատարելապէս համապատասխանում էր իւր արտաքինին: Որոտացող մի անեղագոչ ձայ-

նով գոռաց մեր երեսին. «Կանանց խելքի բանը չէ քաղաքականութեան մէջ քիթ խօթել, այլ յարգել պէտք է գիտնան կառավարութեան կարգադրութիւնները»: Նորան ասացինք, որ ճիշդ նոյն եղանակով կվարուէինք, եթէ միւսիւլմանները լինէին այդ թշուառ ժողովրդի տեղ և որ քաղաքականութիւնը ոչ մի բան չունի մեր գործի և վարմունքի մէջ: Նա կոշտութեամբ պատասխանեց, որ մեզ ամենևին տանել չէ կարող և ստիպուած կլինի մեզ Սըւազ ուղարկելու.... իրաւունք չտուեց տանել մեզ հետ երեխաներին, այլ իսկոյն ուղարկել տուեց մի զինայր երեխաներին մեր սենեակից հանել տալ և բերել.... Մեր քաղաքից դուրս գալու ըոպէին յայտնեցին մեզ, որ նոցա արդէն կոտորել են և որ մենք այլ ևս ոչ մի հնարաւորութիւն չունենք որ և է խուզարկութիւն կատարել տալու...»:

«....Մեզ հետ միաժամանկ ճանապարհորդում էին երկու տաճիկ սպայ, որոնք իսկապէս Հայեր էին, ինչպէս տեղեկացրին մեզ ուղեկցող զինայրերը.... Նոքա աշխատում էին մեզնից չբաժանուել. չորրորդ օրն այլևս չտեսանք նոցա: Երբ հետաքրքրուեցանք նոցա մասին, մեզ հասկացրին, թէ որչափ քիչ հետաքրքրուէինք նոցա վիճակով, այնքան մեզ համար լաւ կը լինի: Ճանապարհին կանգ առանք հանգստանալու մի յոյն գիւղում: Կատաղի դէմքով վայրենու մէկը կանգնած էր ճանապարհի մէջ տեղը: Սկսեց խօսել մեզ հետ և յայտնեց, որ այստեղ կանգնեցրել են իրեն անցող-դարձնող Հայերին սպանելու համար և որ արդէն երկու հարիւր յիսուն հոգի սպանել է: «Այդ Հայերն, ասաց նա, ամենքն էլ մահուան արժանի են, որովհետև ամենքն էլ անիշխանականներ են, ազատամիտներ, և ընկերավարականներ»: Յետոյ պատմեց մեզ ուղեկցող զինայրերին, որ հեռախօսական հրաման ունի սպանելու մեր ճանապարհորդակից երկու սպային....»

«....Մի օր պատահեցինք մի գաղթախմբի, որոնք մնաս բարև էին ասել իրենց գեղանիստ գիւղերին ու աւաններին և որ այդ ըոպէին գտնւում էին Քեմախ-Բողազ

տանող ճանապարհի վերայ: Ստիպուած էինք բաւական երկար կանգ առնել մինչև այդ դժբաղդները կանցնէին: Երբէք մոռանալ չենք կարող այն ամենն, ինչ որ այդ բո- պէին տեսանք,—սակաւաթիւ հասակաւոր տղամարդիկ, բազմաթիւ կանայք, գեղեցիկ կազմուածքով և արտա- յայտիչ դիմագծերով, սիրունիկ երեխաների անվերջ մի շարք, մի քանիսը շիկահեր և կապոյտ աչքերով, մի փոք- րիկ, գեղոյշ աղջկեկ ժպտալիս՝ այդ տարօրինակ շարան- շարան հօտն աչքելիս. ամենքն ևս լուրջ, բոլորի դէմքը մահուան սառնութեամբ դրոշմուած. չէր լսուամ ոչ մի ձայն, շշուկ, ամեն ինչ խաղաղ և հանգիստ, ամենքն ևս յառաջանում էին կարգով, իսկ երեխաները լցուած եզան սայլերի վերայ. անցնում էին այդ տարաբաղդ արարած- ները մեզ ողջունելով. վերջին հրաժեշտն այն ապաբաղդ- ների, որոնք այժմ Տիրոջ գահոյից առաջ են և այնտեղ են հասցրել իրենց գանգատն ու զայրոյթը: Մի պառաւ, ու- ժասպառ կին իջել էր իշուկից և այլ ևս առաջ գնալու և կանգնելու ոյժ չունէր: Խեղճին չսպանեն տեղն ու տեղը: Մեր ոտները սառան և քարացան այդ տեսարանի առաջ:

«Մեր ուղեկցող զինայրը պատմեց, թէ ինքն ուղե- կցել է մի գաղթախումբ բաղկացած երեք հազար հոգուց, բացառապէս կանայք և երեխաներ, որոնց բերեցին Կարնի մօտ գտնուող Մամա-Խաթունից Քէմախ-Բողազ, — Հէփ գիլսի, բիթսի (= Ամենքն եկան և կոտորուեցան), աւե- լացրեց նա: — «Բայց ինչու ենթարկել նոցա այսպիսի դառն տանջանքների, հարցրինք մենք, երբ կարելի էր կոտորել տալ ամենքն էլ իրենց զիւղերում»: Պատասխանեցին, — «Չէնց այդպէս էլ պէտք է, նոցա ամենքն էլ պէտք է դժբաղդանան և, միւս կողմից, ինչպէս պիտի մնայինք այդքան դիակների հետ: Սարսափելի գարշահոտութիւն կլինէր»:

«... Մի անգամ, մենք հանդիպեցինք բանուորների ահագին մի բազմութեան, որ աշխատում էին ճանապարհ- ների վերայ, որ մինչ այդ հանգիստ սրտով զբաղուած էին իրենց աշխատանքով: Նոցա բաժանել էին երեք խմբի,—

Միւսիւլմաններին, Յոյներին և Հայերին: Վերջիններիս մօտ գտնուում էին մի քանի սպայ: Մեր երիտասարդ Հասանը գոռաց—«այ, նոցա բոլորին էլ հիմա կը կոտորեն»: Մեր ուղին շարունակելով, բարձրացանք մի բլուր: Այն ժամանակ մեր կառապանը մտրակով ցոյց տուեց մի հովիտ և նկատեցինք, որ մեր թողած խմբից բաժանեցին նոցա, մօտ չորս հարիւր հոգի, նոցա կանգնեցրին շարէ-շար, մի գահավէժի եզերքի: Մենք գիտենք թէ ինչ պատահեց նոցա:

«... Մի ուրիշ տեղ, մինչդեռ տաճիկ զինայրները հրացանի էին բռնում Հայերին, տաճիկ բանուորները լրացնում էին նոցա կիսատ թողածը դանակներով և քարերով... Սըվազ հասնելու տասներկու ժամ մնացած զիշերեցինք մի իշխանաւորի տան: Երկար ժամանակ, մի զինայր, նստած մեր դռան առաջ, անվերջ երգում էր և մրմռում էր մենկերի հետի ֆէսըլէր—«Հայերին ամենքին էլ կոտորեցին»: Հարևան սենեակում խօսում էին հեռախօսով: Լսեցինք, թէ ինչ կարգադրութիւններ էին լինում Հայերին թաղելու եղանակի մասին: Խօսւում էր մանաւանդ ինչ որ մի Օհանէսի մասին, որին չէին կարողացել գտնել:

«Մի գիշեր մենք պառկեցինք մի Հայի տան, ուր կանայք շարունակ էլ ու մուտ էին անում իրենց գերդաստանների տղամարդոց մահուան լուրն իմանալու համար: Սարսափելի էր այդ ողբ ու կոծի ձայները լսել: Իզուր էինք աշխատում խօսել և սփռիւել նոցա. «Մի՞թէ ձեր կայսրը չէ կարող օգնել մեզ» գոռում էին նոքա երեսներին: Զինայրը պատմում էր, «Մենք նախ Հայերին ենք կոտորում, յետոյ հերթը Քիւրդերին կհասնի»: Մեր կառապան Յոյնը սարսափելի ծաղրի մահացու ըոպէներ քիչ չքաշեց, «Լաւ նայիր՝ փոսի մէջ, այնտեղ Յոյնն էլ չի պահաս»:

«Վերջապէս հասանք Սըվազ»\*):

\*) Quelques documents sur le sort des Arméniens en 1915, pp. 25—36.

Յառաջ բերենք, ի միջի այլոց, նաև մասնաւոր վկայութիւնների բնոյթ ունեցող մի գրութիւնից մի կտոր, աչքի առաջ ունենալով այն անձնաւորութիւնները, որոնցից բղխում են այդ տեղեկութիւնները:

Խարբերդի Միացեալ-Նահանգների հիւպատոսը (11 յուլիսի) գրում է.

«... Յունիսի առաջին օրերին երևացին Խարբերդում՝ Կարինից և Երզնկայից եկած առաջին գաղթախմբերը, կորած ցնցոտիների և թաղուած կեղտի մէջ, քաղցած, հիւանդոտ, Երկու ամիս ճանապարհ էին կտրել, համարեա, առանց սննդի, քաղցած ու ծարաւ: Նոցա առաջը նետեցին խոտ, կարծես անասունների էին կերակրում, և նոքա այնքան քաղցած էին, որ ընկան այդ խոտի վերայ և սկսեցին ուտել. սակայն զապթիէները յետ մղեցին նոցա ճիւղտի հարուածներով, իսկ մի քանիսն էլ սպանուեցան: Մայրերն առաջարկում էին տանել իրենց զաւակներին, ով կցանկանար վերցնել նոցա: Թիւրքերն ուղարկեցին իրենց բժիշկներին, որպէս զի մատաղահաս աղջիկներին քննութեան ենթարկեն՝ առողջական վիճակի տեսակէտից և ընտրեն նոցանից ամենից աւելի սիրուններին իրենց հարեմների համար: Այդ դժբախտ տարագիրների պատմածին նայած՝ ամենամեծ մասն սպանուել է ճանապարհին, շարունակ Քիւրդերի յարձակման ենթարկուելով. շատերն ևս մեռել են քաղցից և ծիւրուելուց:

«Երկու օր յետոյ նոր գաղթախումբ: Նոցա մէջ կային երեք քոյր, որ խօսում էին անգղիերէն և Կարնոյ ամենահարուստ ընտանիքի զաւակներ էին: Նոցա գերդաստանի քսան և եօթ հոգուց՝ տասն և մէկն սպանուել էին ճանապարհին: Նոցանից մէկի ամուսինը և իրենց պառաւ տատը, իրենց աչքի իսկ առաջ, Քիւրդերն սպանել էին շարաշար: Ութ տարեկան մի տղեկ արու ներկայացուցիչների ամենատարիքոտ անձն էր այդ խմբի մէջ: Ճանապարհին ամեն ինչ խլել էին նոցանից, նոյն իսկ հագի զգեստները. քոյրերից մէկը բոլորովին մերկ էր, միւս երկուսը շապկի պէս մի բան ունէին վրանին քաշած: Մի գիւղում, զինայրերը

նոցա տուել էին տեղականի զգեստներից մի-մի բան: Կարին բողոքական պարտեօրի աղջիկն էլ նոցա մէջ էր. նոցա ընտանիքի անդամներն, ամենքն էլ, սպանուած էին Գիւրդերի ձեռքով, որոնք սպասուած էին զաղթախմբերին ճանապարհների վերայ. սպանուած էին առաջ տղամարդոց, յետոյ կանանց և երեխաներին: Ամեն ինչ խնամոտ հոգածութեամբ էր կազմակերպուած, ինչպէս նախորդ շարդերի ժամանակ:

«Խարբերդում, արտագաղթի նշաններն սկսուեցան հազարաւորների ձերբակալումով... Պատմում են, որ լեռ տարուածներն ամենքն ևս սպանուած ու կոտորուած են այնտեղ: Յունիսի 5-ի առաւօտեան ձերբակալեցին այլ ևս 800 հոգի, իսկ 6-ի առաւօտեան լեռներն ուղարկեցին նոցա: Այնտեղ նոքա իրար կապուեցան 14 հոգի միասին,— այդքան էր սլարանների երկարութիւնը,— և նոցա ամենքին ևս հրացանի բռնեցին: Հարեան մի այլ գիւղում, մի ուրիշ խումբ փակուեցաւ մզկիթի և նորան յարակից տների մէջ և երեք օր շարունակ թողեցին նոցա անսուաղ և անջուր և քշուեցան մօտակայ ձորը, յետոյ մի քարժայռի վերայ, հրացանի բռնեցին ամենքին ևս, իսկ չսպանուածներին սուինների հարուածներով և դանակներով վերջացրին. դոցանից երկու-երեք հոգի ազատուեցան, որոնք և պատմեցին իրենց գլխի եկածները: Այդ խմբի մէջ էր և ամերիկական բօլէջի գանձապահը:

«Այդ բանտարկուածներից և սպանուածներից իսկ մէկի դէմ որ և է ամբաստանութիւն չէ կազմուած. դատաստան ասուած գաղափարի ոչ մի հետք...»

«Կառավարութիւնը կամենում է բոլորովին ջնջել այն ամէն հնարաւորութիւնը, որ ցոյց էր տուել Ամերիկական Առաքելութեան կրթական աշխատանքը շարունակելու համար. ոչ ոք ոչ մի յարաբերութիւն պիտի չունենար որ և է օտարազգու կամ օտարերկրացու հետ. երկիրը բացառապէս միւսիւլման աշխարհ պիտի լինի միայն»:<sup>\*</sup>)

<sup>\*</sup>) Quelques documents sur le sort des Arméniens en 1915 pp 37—39. Մ. հ. ք.

Միացեալ-Նահանգների Տրապիզոնի հիւպատոսի (յուլիս 28) զեկուցագրից.

«.....Նշանաւոր քաղաքացիներէ մի ստուար բազմութիւն, մօտ 600 հոգի, առաջնորդուեցան փոխադրական նաւերը, տեղաւորուեցան և տարուեցան Սամսոն: Մի քանի ժամից յետոյ նաւերը դատարկ յետ դարձան: Բաց ծովում նոցա սպասում էին զափթիւներով լի նաւեր. ամենքին ևս սպանելով՝ ծովն էին նետել.....»

«Առաջին օրերին՝ ծրագրուեցաւ բանալ մի Որբանոց, ուր պէտք է խնամուէին սպանուած ծնողների անտէր մնացած փոքրիկ, անոք որբերը.... Չնայելով, որ Ամերիկական հիւպատոսը և Յոյն արքեպիսկոպոսը ամէն հնարաւոր միջոցներ ձեռք առին այդ ծրագիրը գլուխ բերելու համար, սակայն վալիւն, իթտիհատականների\*) պարագլուխ Նայիլ-բէյի հրամանի համաձայն, թոյլ չտուեց. ազատուած ամենասիրուն, երիտասարդ աղջիկներից տասը հոգի, իթտիհատականների մի անդամի ձեռքով փակուեցան մի տան մէջ, որպէս զի իւր և իւր բարեկամների կրքերին յագուրդ տան, իսկ մնացած կոյսերին ցրեցին միւս միւսիւլմաններէ տները. փոքրիկներից մի քանիսը կարողացան տեղաւորուել յարգելի միւսիւլմանների ընտանիքների մէջ, իսկ մնացածները փողոց նետուեցան, որ ուզողը տանէ....»

«Ոչ մի հարց ու փորձ, քննութիւն չէ կատարուած մեղաւորներն ու անմեղներն իմանալու համար. և կամ որոշելու կառավարչական և կամ հակա-կառավարչականներին: Հայ լինելն արդէն մեղաւոր լինել կնշանակէր....»\*\*):

Քաղուածք Sonnenaufgang-ից (1915, սեպտ. 1), որ Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk in Orient-ի\*\*\*) թերթն է.

«Մարաշ, յունիս 4. — Նոր հէնց հաւաքեցինք տասն և

\*) Միութեան և Յառաջադիմութեան կուսակցութիւն:

\*\*) Quelques documents sur le sort des Arméniens en 1915. pp. 39—42.

Մ. հ. ք.

\*\*\*) «Քրիստոնէական գթասրտութեան Գերմանական Միութիւն Արեւելքում»:

չորս ծծկեր մանուկ: Երեքն արդէն մեռան, սարսափ էր ազդու՝ նոցա նիհարութիւնն ու հիւժուած վիճակը, երբ նոցա ժողովում էինք: Ա՛, եթէ կարողանայինք գրի անցնել բոլոր տեսածներս....

«.... Հալէպ և Ուրֆա են ժողովում գաղթախմբերի կարաւանները: Ապրիլից մինչև յունիս անցել են մօտ 50,000 հոգի: Մատաղահաս աղջիկներին, ամենքին համարեա, զինուորներն են տանում և կամ նոցա օգնական արարները: Մի յուսահատ հայր աղաչում էր հետոս առնել իւր տասն և հինգ տարեկան աղջկանը, որին նա այլ ևս չէր կարողանում բռնաբարելու փորձերից պաշտպանել: Կարաւանների երկար շարքերից երեսի վերայ, ճանապարհին, ձգուած երեխաների թիւն անհամար է: Ճանապարհին երկունքից ազատուող կանայք պարտաւոր էին անմիջապէս շարունակել իրենց ուղին: Այնթապի մօտ, մի գիշեր, մի կին երկուորեակ ծնեց: Հետևեալ առաւօտեան նա պարտաւոր էր ճանապարհ ընկնել. շուտով նա ստիպուած եղաւ իւր երկու զաւակին ևս երեսի վրայ ձգել մի թփի տակ. մի քիչ հեռու՝ ինքն էլ վայր գլորուեց: Մի ուրիշը ստիպուած էր ազատուել նոյն իսկ քայլելու ժամանակ, այդպէս էլ շարունակել տուին ճանապարհը և քիչ յետոյ դիակնացած վայր ընկաւ: Նման դէպքեր շատ շատ են եղել Մարաշի և Հալէպի ճանապարհին:

«Շարի բնակչութիւնն իրաւունք է ստացել հետն առնել իւր տան կահ-կարասին: Ճանապարհին հրաման ստացան թողնել այդ ուղին և լեռն ելնել: Ստիպուած թողեցին այդ տեղ ամէն ինչ, — եզներ, սայլեր, տան ունեցած — չունեցած ևն., և ոտքով սարի ճանապարհը կտրել: Ճանապարհի դժուարութիւնից, անտանելի շոգից բազմաթիւ կանայք և երեխաներ մահացած թափւում էին այս ու այն տեղը:

«Այդ շրջանի 30,000 գաղթեցրածներից և ոչ մէկի մասին լուր կայ, թէ ինչ եղան: Նոքա ոչ Հալէպ են հասել և ոչ Ուրֆա...»\*):

\*) Quelques documents sur le sort des Arméniens en 1915. pp. 42—46.  
Ծ. հ. ք.

Կարող էինք բազմապատկել այս պատմութեան, վկայութիւն վկայութեան վերայ շարել, պատմել, օրինակ, թէ ինչպէս շատ տեղերում գաղթախմբերը ճանապարհ դնելուց առաջ և, կարծէք, հաւաստիացում տալու համար նոյն իսկ զնացողներին, թէ շատ հեռու պիտի չերթան, տաճիկ դահիճ-զինուորները փայտերի հարուածներով ջախջախում էին մարդկանց ոտների ներքանները (գարշապարները). բայց դորանով միմիայն նկարի վերայ մի քանի նոր գծեր կաւելացնէինք:

Բաւականանա՞նք միայն հետաքրքրուողներին մատնացոյց անելով մի քանի լուրջ, փաստաթղթերի վերայ հիմնուած, անկողմնապահ և փաստալից հրատարակութիւններ, ինչպէս օրինակ, — Նիւ-Եօքի Ամերիկական Ցանձնաժողովի գեկուցագիրը Հայաստանում կատարուած խժոժութիւնների մասին \*) (1915, հոկտեմբեր) և մի գրքոյկ որ կրում է հետեւեալ տիտղոսը — «Հայկական խժոժութիւններ. Մի ազգի սպանութեան գործը \*\*), որ պատկանում է Արնօլդ Ժ. Թոյնբի-ի գրչին, Լօրդ Բրայսի Աւագների-Պալատում արտասանած իւր սքանչելի ատենախօսութեամբ, իբր նախաբան\*\*\*): Վերջապէս, նորերս հրատարակուելիք, մի սրտայոյզ և մանրակրկիտ ուսումնասիրութեան արդիւնք գրքոյկ, որի հեղինակը սիրալիր կերպով մեր տրամադրութեան տակ դրեց սրբագրական էջերը, — «Նորագոյն պատմութեան ամենամութ եւ սեւ էջը: Հայաստանի վերջին կոտորածները: Պատասխանատուները †), գրուած Հերբերտ Ատամս Զիբբոնսի ձեռքով:

\*) Rapport du Comité Américain de New-York sur les atrocités commises en Arménie.—

\*\*) Armenian atrocities. The Murder of a nation, by Arnold G. Toynbee.—With a speech delivered by lord Bryce in the House of Lords (London, New-York, Toronto, Hodder et Stoughton).—

\*\*\*) Լօրդ Բրայսի ատենախօսութեան հայերէն թարգմանութիւնը տես «Արարատ»ի Յուն. — Փետր. ամիսների մէջ, էջ 87—95:

Ճ. հ. ք.

†) La page la plus noire de l'histoire moderne. Les derniers massacres d'Arménie. Les responsabilités, par Herbert Adams Gibbons.

## Գ.

Այս բոլոր պատմութեան մէջ ամենից աւելի աչքի զարնողն այն հանդամանքն է, թէ ինչպիսի կանոնաւոր և կանխորոշ կազմակերպութեամբ է կատարուած ջարդերի գործը: Գերմանացիներն, անշուշտ, կարգաւորութեան այդ ոգով կճանաչեն իրենց դաշնակիցներին և աշակերտներին: Վայրենի և կատաղի անխիստանութեան ընդէններին մի յուսահատ ժողովրդի իրեն ճնշող մի ուրիշ ցեղի վերայ յարձակման խնդիր չէ այստեղ: Ո՛չ: Գործն սկսւում է կառավարութեան՝ զիւղերի մէջ յայտարարած հրամանի համաձայն. հրահանգները գալիս են Կ. Պօլսից բարձրաստիճան պաշտօնեաների անուշով և նոցա միջոցով հասնում գործադրել տուողներին և գործադրողներին: Հեռախօսն այդ մահադգած ողբերգութեան մէջ մեծ դեր է խաղում. վկաների ցուցումների մէջ անդադար լսւում է նորա ձայնը. մտովի տեսնում ենք «իշխանաւորներին» ի մի գումարուած: Ամեն ինչ կատարւում է զարհուրելի կարգաւորութեամբ: Քաղաքների մէջ սպանութիւններ չեն լինում՝ «օդը չապականելու» համար: Քաղթախմբերի կարաւաններն իրար են հանդիպում և միանում նախօրօք որոշուած օրն ու ժամին. Քիւրդերն ու հրոսակախմբերը կանխագոյն ազդարարութեան շնորհիւ, ճիշտ որոշեալ ժամին ժամադրութեան տեղն են լինում և զինայրերի օժանդակութեամբ որսերը մի կողմն են քշւում: Գործակալներն զբաղուած են Տաճիկ պետութեան ձեռքով Հայերի տներից հանած կողոպուտները վերաքննելով և հաշուի առնելով: Աւարի յափշտակութեան յուսով կիտուած ամբոխի բերանն են ձգում մի քանի մանր-մունր, աննշան իրեր. իսկ ինչ որ իսկապէս արժէք ներկայացնող մի բան է, առանձին է պահւում՝ յետոյ վաճառելու նպատակով. դորանով նախ Հայերի պետական պարտքերը կվճարուին, յետոյ մասնաւորները, որպէս զի ո՛չ մի բարի միւսիւլման զրկուած չլինի, ապա քնացածը Արքունիք կը գրաւուին: Բոսնիայից և Մակեդոնիայից բերած միւսիւլմանները տեղաւորւում

են Հայերի բնակավայրերում և տների մէջ, իբրև նոր գաղութներ: Դա դ-ր Նազիմի ծրագրի իրագործումն է: Կանանց և երեխաների իրար մէջ բաժանելու հարցն ևս կատարւում է ամենայն կարգաւորութեամբ, նախապէս ենթարկելով նոցա թիւրք բժիշկների բժշկական-առողջական քննութեան: Կենդանի մնացած որբերը ժողովւում են միւսիւլման որբանոցների մէջ. խստիւ արգելուած է քրիստոնեաներին նոցա հոգածութեան հարցով զբաղուել և նոցա պատսպարել: Ամերիկացիների մեծահոգի ջանքերն այդ որբերից մի քանիսին գոնէ փրկելու համար՝ անպտուղ մնացին. անօգուտ և անշահ անցան նաև նոցա բոլոր ջանքերը՝ Միջագետք ուղարկած և քաղցից, տենդից ու թշուառութիւնից մեռնելու դատապարտուած Հայերի դժբաղդ մնացորդներին որ և է կենսական պիտոյք ուղարկելու նկատմամբ: Տեղական իշխանութիւնները յայտնել են, որ զաղթականները ոչ մի բանի կարիք չունին և որ կառավարութիւնը իւր պարտականութիւնն է համարում նոցա մասին հոգալու և անունդ հայթայթելու գործը:

Ինքնախաբէութեան տեղիք այլ ևս չէ մնում. պարզ է, որ Հայ ազգի բնաջինջ անելու խնդիրն է դրուած, լինի դա մահուան գնով, թէ խիստ մեծ հետապնդութեամբ առաջ տանուող՝ բռնի իսլամութեան դարձնելու ճանապարհով: Յետոյ միւս քրիստոնեայ ազգութիւնների հերթը կհասնէ: Արդէն Սալմաստի և Ուրմիայի շրջանների Քաղդէացի-Ասորիները կողոպուտի և ջարդի են ենթարկուած: Առ այժմ, բաղաքական նկատումներով, խուսափում են ձեռք տալ Յոյներին, բայց նոցա հերթն էլ կհասնէ, երբ Տաճիկ կառավարութիւնը բարեպատեն րոպէն հասած կը համարէ: Դա վարչական մի որոշ դրութեան հետապնդումն է, վերջնական ձևակերպութիւն ստացած մի դատակնիք, — դա 1908 թուականի «ազատարար» յեղափոխութեան վերջնական հետևանքն է: Երիտասարդ-թիւրքերի վարչութիւնը «Հայկական արհաւիրքների» կատարեալ պատասխանատուն է: Նոյն իսկ եթէ ապացուցուի, — որ տարադէպ է, — թէ Հայաստանում դաւադրութիւններ և ապստամբութիւն-

ներ են եղած, այդ պատասխանատուութիւնն այնու ամենայնիւ իւր ոյժը չի կորցնիլ. ոչ մի բան չի կարող արդարացնել ոչ զինակից ընկերների ձեռքով կոտորած Հայ զինուորների կորուստը, ոչ կանանց և երեխաների և ծերերի ջարդերը, ոչ կենդանի մնացածների բռնի կրօնափոխութեան մղելը, ոչ կազմակերպուած աւարառութիւններն ու կողոպուտները և ոչ այն գարշելի պղծութիւնների շարանը, որ ոչ մի գրիչ չէ համարձակուամ գրի առնել և որ, ի պատիւ մարդկութեան, ցանկալի կլինէր իսպառ ջնջել պատմութեան էջերից:

Սակայն, բացի այդ մի քանի արկածախնդիրների պատասխանատուութիւնը, որոնք Տաճկաստանը կործանելու համար, ձեռք ձգեցին կառավարութեան դէկը, կայ և մի այլ պատասխանատուութիւն: Օսմանեան նախարարութեան խորհուրդը այլ ևս ազատօրէն գործող մի կառավարութիւն չէ. նա կախուած է անմիջապէս Գերմանիայից: Կ. Պօլսի Գերման դեսպանը շատ աւելի տէր է այնտեղ, քան նախարարները. նա իւր հիւպատոսներն ունի Տաճկահայաստանի զլխաւոր կենդրոններում. նա, անշուշտ, իրազեկ էր ամենայն օր այնտեղ կատարուող մի ամբողջ ազգի բնաջինջ անելու նկատմամբ, եղած ձեռնարկութիւններին և գործերին, որ կատարուեցաւ գերման գործակալների աչքի առաջ. նա ոչինչ չարեց դորա առաջն առնելու և արգելելու և նոյն իսկ սարսափների չափը մի փոքր մեղմել տալու համար. նա մինչև անգամ ինքն է տեղեկութիւն տուել իւր Կառավարութեան Տաճիկ վարչութեան դժխեմ ծրագրի մասին և այդ Կառավարութիւնը լռութիւն է պահպանել կամ հաւանութիւն տուել: Բերլինից եկած մի veto, նոյն իսկ խորհրդի ձեռով, տեղն ու տեղը կխափանէր կամ կկանգնեցնէր ջարդերը: Ահա ապացոյցը: Դեսպանը հրաման տալ տուեց, որ Խարբերդի մօտ գտնուած, Մեզրէի մէջ գտնուած Գերման առաքելութեան հետ կապ ունեցող Հայերին ձեռք չտան և այդ հրամանը ամենայն ճշտութեամբ կատարուեցաւ: Բարօն դը-Վանզէնհայմը փորձով գիտէր թիւրքերին. նա գիտէր,

որ նոցա համակրութիւնն ու հաւատը գրաւած պահելու համար, աւելի լաւ կլինէր շոյել նոցա կրքերը և նախապաշարութիւնները, քան նոցա բան հասկացնելու և խնդիրը պարզելու փորձեր անել: Իւր քաղաքագիտական նկատութիւններով խուսափեց խնդրին միջամտելուց: Դա Պիդատոսի վարմունքն էր: Փերման հիւպատոսները հրահանգ էին ստացած խուսափել «Թիւրքական ներքին գործերին» միջամտելուց: Քիչ առաջ կարդացինք էրզրումի Փերման հիւպատոսի տուած պատասխանը Փերման Կարմիր-Խաչի մէջ ծառայող երկու հիւանդապահի աղաչանքների և թախանձանքի դէմ: Սիւրիայում ապաստան գտած դադթականներին վկայութեան համաձայն, մի քանի Փերման հիւպատոս նոյն իսկ քաջալերել և ղեկավարել են ջարդերը. մասնաւորապէս մատնացոյց են անում Հալէպի հիւպատոս Ռօսլէրին (Rossler), որի կատարած դերը ցոյց տուինք Ձէյթունի ժողովրդին ջարդելու պատմութեան ընթացքում: Նիւ-Եօրքի մէջ հրատարակուող Կոչնակ Հայ թերթի բազմաթիւ օտարազգիների գրած նամակների մէջ տեղեկագրւում է, որ Փերման պաշտօնատարները խթանում և գրգռում էին մի քանի չափաւոր թիւրքերի եռանդն ու ջանքը: Ուրֆայում տեսել են, թէ ինչպէս Փերմանական հիւպատոսը ղեկավարում էր հայկական ջարդերը: Վկաներն ապացուցանում են, որ իրենք տեսել են թէ ինչպէս Փերման սպաները հրամանատարութիւն էին անում սաճիկ զինուորների հրացանաձգութիւնների բռնակներ: Յամեսայն դէպս մի բան ստոյգ է, որ գերմանական բոլոր գործակալները որոշ հրամանի և հրահանգի համաձայն աչք էին գոցում. մարդկային բառարանում դեռ ևս իւր անունը չունեցող այդ սոսկում-ոճրի հեղեղի բռնակներին, ոչ մի տեղ չի կարելի գտնել նոցա զգացած գարշանքի և ցոյց տուած գթասրտութեան ամենաչնչին հետքն իսկ: Երբ ամենքին քաջ յայտնի է, թէ ինչ կարող է անել թիւրքիայում եւրոպական որ և է հիւպատոսի հեղինակաւոր ազդեցութիւնը, ստիպուած ենք առաւել խիստ դատաւիտութեան ենթարկել նոցա բռնած դիրքը և ա-

ռաւել ևս խստութեամբ վերաբերուել նոցա կառավարութեան ընդգրկած ուղղութեանը \*):

Երբ, յուլիս ամսին, Միացեալ-Նահանգների կառավարութիւնը խնդրեց Բերլինի կառավարութեան, որպէս զի վերջինս իւր ջանքերը միացնէ նորան Հայկական ջարդերին վերջ դնելու համար, այդ հրաւերը բոլորովին անպատասխան մնաց \*\*): Երբ Միացեալ-Նահանգների դեսպանը, Morgenthau, դիմեց իւր գերման պաշտօնակցին, բարոն դր-Վանգէնհէյմը յայտնեց նորան, թէ ինքը չափազանց ցաւում է անցած-դարձածի մասին, սակայն ինքը ոչ մի հնար չունի միջամտելու Թիւրքիայի ներքին գործերին: Ուաշինգթընում, Կոմս Բերնստորֆը (Bernstorff) ջարդերի իրականութիւնը ժխտել սկսեց. «Այդ կարծեցեալ խժդր-ժութիւնները լոկ երեւակայութեան արդիւնք են», գրում էր նա: Եւ հասկացնել էր տալիս, թէ Ռուսներն են, որ ստիպում են էջմիածնի կաթողիկոսին այդպիսի առասպելաբանութիւններ տարածել: Յունիսի 6-ին, Վօլֆի գործակալութիւնը Թիւրքական պաշտօնական մի այսպիսի հաղորդագրութիւն էր հեռագրում: «Բոլորովին սխալ է, թէ Հայերի կոտորածներ և կամ սպանութիւններ են կատարուած: Կարնոյ, Երզնկայի, Արղնի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի Հայերը ոչ մի այնպիսի գործ չեն կատարել, որ խանգարէր հասարակաց կարգն ու խաղաղութիւնը և որ ստիպէր նոցա դէմ յատուկ միջոցներ ձեռք առնել:

\*) Աւստրո-Հունգարական կառավարութիւնն էլ տաճկական եղանակներն է գործադրում կայսրութեան Սերբ ազգաբնակչութեամբ բնակեցրած գաւառներում, Բոսնիա-Հերցեգովինայում բազմաթիւ Սերբ ընտանիքներ դուրս են վճնդուած, նոցա շարժական ու անշարժ կայքը տուած է գերմանական և հունգուրական գաղութներին: Տեղական լրագիրների մէջ հրատարած բռնագրաւումների ցուցակները, որ պաշտօնապէս հրատարակուեցան, Բոսնիայի, Հերցեգովինայի, Սլովաթիայի, Սլաւոնիայի, Սիրմիայի նահանգների և Թեմիշվարի բանատի փաստուած Սերբ ընտանիքների թիւը 80,000 են հասնում: (Agence des Balkans-ի յունուար 15 հեռագիրը):

\*\*) New-York Herald, հոկտ. 6:—

Չէզօք պետութիւնների հիւպատոսներն այդ շատ լաւ գիտեն»։ Յետագայում, Կոմս Բենստորֆն իրադարձութիւններին ի մօտոյ տեղեկանալով՝ Միացեալ-Նահանգների Պետական-Քարտուղար Բրիանին ներկայացնում է Տրապիզոնի գերմանական ընդհանուր հիւպատոսի զեկուցագիրը, որ արդարացնում է կատարուած ջարդերը այն պատճառաբանութեամբ, թէ «Հայերը դաւաճանում էին Տաճիկ կառավարութեանը և գաղտնապէս օգնում և օժանդակում էին Ռուսներին»։ Գերմանական լրագրութիւնն ընդունեց բարոն դը-Վանդէնհայմի պաշտպանած տեսակէտը և ինքն ևս ամենայն եռանդով քարոզում էր, թէ Գերմանիան ոչ մի դէպքում չէ կարող միջամտել Օսմանեան կայսրութեան ներքին գործերին։ Կոմս Ռեվենտլովը, Deutsche Tageszeitung-ի մէջ, աչքի ընկաւ իւր չափազանց եռանդով. նա յայտնեց, որ «Թիւրքիան ոչ միայն իրաւունք ունէր, այլ և պարտաւոր էր պատժելու ապստամբ և արեան ծարաւի Հայերին»։ Չէզօք մամուլի բողոքները այն հետեանքն ունեցաւ, որ Գերմանիայում մի թեթեւ յոյզ առաջ բերեց, այնտեղ վախեցան, թէ չլինի «Հայկական խժոժութիւնները» Եւանկիների հասարակական կարծիքի վերայ ազդեցութիւն ունենան։ Իւր սովորութեան համաձայն Գերման մամուլը, ի նկատի ունենալով դատապարտութեան անխուսափելի լինելը, պաշտպանողական դիրք բռնեց և աշխատեց ապացուցանել, որ բոլոր մեղքը Հայերինն է եղած։ Գերման բոլոր առակների մէջ՝ միշտ խեղճ գառն է որ պղտորում է աղա գայլի խմելու ջուրը։ Պաշտպանողական մի տեսրակ նորերս լոյս տեսաւ Բերլինում\*)։ մենք անկարող եղանք դեռ ևս նորանից մի օրինակ ստանալ, սակայն մեր աչքի առաջն է այն յօդուածը, որով Կոմս Ռեվենտլովը տալիս է նորա բովանդակութիւնը և հանրական ջերմ համակրանքին յանձնարարում։ Այդտեղից երևում է, որ յեղափոխական Հայերն են մեղաւոր, որ Ռուսաստանի և Անգղիայի թելադրութեամբ պատրաստել են ապստամ-

\*) C.-A. Bretter: Die Armenische Frage. Concordia. Deutsche Verlagsanstalt, Berlin.

բուժիւնն ու դաւաճանութիւնը. Թիւրքերը միայն վրէժ-  
խնդիր են եղել... Բրէտտերի առաջ բերած փաստաբա-  
նութիւնը, որին յարել է և կոմս Ռեվենտլովը, գոնէ քսան  
տարով իրենց այժմէութիւնը կորցրած են և կարծես, շատ  
անշնորհք կարկատաններով նորոգել են ուզած: «Կարելի է  
ապացուցանել, գրում է Բրետտերը, որ Անգղիան, Ռու-  
սաստանի և Ֆրանսիայի աջակցութեամբ, բազմաթիւ դա-  
ւեր է սարքել տուել Հայաստանում, որպէս զի հնարաւո-  
րութիւն ունենայ դաշնակիցների Դարդանել մտած ըո-  
պէին, այնտեղ մի ընդհանուր ապստամբութիւն ծագեցնել  
տալ... Ի դժբաղդութիւն Հայերի, ապստամբութիւնն այն-  
տեղ կանխեց և միաժամանակ դաւադրութեան քօղը բա-  
ցեցին Թիւրքերի առաջ»: Եւ Ռեվենտլովը եզրակացնում  
է. «Ժամանակ է վերջապէս, որ Գերմանները հասկանան  
գոնէ, թէ Հայկական խժոժութիւնների աղմուկի ձայները  
նրաեղից են գալիս: Որ հասկանան վերջ ի վերջոյ, թէ մեր  
գործը չէ ամենևին խղճահարութեան յոյզեր ցոյց տալ  
Հայ ապստամբների և վաշխառուների վիճակի նկատմամբ,  
որ մի ահուելի վտանգ են մեր հաւատարիմ դաշնակից  
Թիւրքերի համար և որ մեր մահացու թշնամիների, Ան-  
գղիայի և Ռուսաստանի, ձեռքի գործիքներն են նոքա: Եթէ  
Թիւրքերն ամենաեռանդուն կերպով չը պաշտպանուէին  
Հայկական վիճակի դէմ, ապա նոքա իրենց դաշնակիցնե-  
րին ևս, ինչպէս և իրենց, ամենավատ ծառայութիւնը  
մատուցած կլինէին: Ահա թէ ինչու, մենք՝ Գերմանացի-  
ներս, պարտաւոր ենք այդ «Հայկական հարց» կոչուած  
խնդիրը, ոչ միայն լոկ Թիւրքիայի համար հետաքրքրող  
մի գործ համարել, այլ և նորա միւս բոլոր դաշնակիցների  
համար, և մենք պարտաւոր ենք պաշտպանել նորան (Թիւր-  
քիային) արտաքին ամէն տեսակ յարձակումից\*)»:

Սակայն, պէտք է ասենք ի նպաստ Գերմանացիների  
և այս, որ նոցա մէջ գտնուել են խղճմիտ անձեր, որոնք  
շատ աւելի քիչ օգտախնդիր տեսակէտ են ունեցած, քան  
կոմս Ռեվենտլովը: Մի քանի ժամանակից ի վեր բողոք-

\*) Deutsches Tageszeitung, 19 դեկտ. 1915.

ները գլուխ են բարձրացնում: Կաթոլիկները որոշ խմբակցութիւններ արձագանք են տալիս Պապի ձայնին. բողոքական մի քանի պատօր հրատարակութեան տուին իրենց քարոզչական-առաքելութիւններից ստացած գութ շարժող պատմութիւններ: Դ-ը Լէպսիուսը գնաց Կ. Պօլիս խոզարկու մի քննութիւն կատարելու նպատակով. շշուկներ են պատում, որ նա պատրաստում է տպագրութեան տալ մի հրատարակութիւն, որով ամօթի խարան է դրոշմուելու Թիւրքերի երեսին՝ նոցա կատարած ոճիրների պատճառով և դատապարտութեան կնիք է դնելու Գերմանական ձեռնպահութեան վերայ: Սակայն հարց է Պետական շահերը թոյլ կը տան այդպիսի մի գործ հրապարակ գալու: Մինչև այժմ, այնպիսի գիտնականներ, ինչպէս Lehmanhaupt, Marquart, Strjigovsky, որ Հայ ցեղի մասին գովեստի դրուագներով լի գրքեր են նուիրած, լուռ են դեռ ևս: Lepsius-ն աւելի պերճախօս կլինի նոցանից:

Դեռ ևս ժամանակ կայ կորստից փրկելու Հայ ցեղի փշրանքները. ազատելու բանտի մէջ փակուածներին, բռնի իսլամացրած թշուառ անչափահասներին Թիւրքերից թափելու, հարեմների մէջ բռնի փակուած կանանց դուրս կորզելու, Միջագետք հասած փախստականների մնացորդների մնացորդներին սովից ազատելու: Հայերի ջարդերը դեռ ևս վերջնական կնիք ստացած պատմութիւն չէ, բնաջնջումը շարունակւում է, ընդհանրանում է: Հալածանքը դժնի կերպարանք է ստանում Կ. Պօլսի շրջանում: Իզմիտի շրջանից վերջերս 180,000 հոգի ուղարկուած են Կարամանլի, որպէս զի այնտեղից ուղևորուին մի տեղ, ուր մահն է սպասում նոցա: Հոկտեմբեր ամսի մօտերը Բուլտուրի, Ստարտայի Հայերը բնաջինջ եղան. տղամարդոց սպանելուց յետոյ, Թիւրքերը լկել են և բռնաբարել բոլոր կանանց և երեխաների հետ գահավէժներից ցած գլորել:— Թրակիայի Հայերը միացրած են և կազմած մի ստուար գաղթախումբ և ուղևորած Անատօլիա. ճանապարհին նոքա ամենքն ևս անհետացան:— Կեսարիայում, Հայերը զանազան խմբերով, իւրաքանչիւր խումբ բաղկացած հազարա-

կան հոգուց, տղամարդիկ առանձին և կանայքն առանձին, ճանապարհ են դրուած զանազան ուղղութեամբ, անյայտ տեղեր: Եւ երբ դիմեցին վալիին՝ արտօնելու գոնէ ծծկեր մանուկներին թողնեն զթառատ միւսիւլմանների ընտանիքների մէջ, որպէս զի ճանապարհին չմեռնեն, նա պատասխանեց. — «Ես չեմ ուզում որ Հայի հոտն իսկ մնայ այստեղ. գնացէք Արաբիայի անապատներն և այնտեղ հիմնեցէք ձեր Հայաստանը»: Այսպէս ուրեմն, գաղթականութեան անուան տակ, Հայերի բնաջնջումը շարունակւում է: Միացեալ-Նահանգների, Պապական աթոռի պատգամաւորի միջամտութիւնն անհետեանք են անցել: Նոյն իսկ Կ. Պօլսում քաջարի և ազնիւ ձայներ լսուեցան, ի թիւս այլոց և Ահմեդ-Ռիզայինը, որոնք պարսաւելով պարսաւում էին մի ամբողջ ազգի այդօրինակ բնաջնջումը: Զմիւռնիայում մի աւելի եռանդուն և անկախ դիրք ստեղծած վալի, Ռահմի-բէյը, բաւականացաւ միայն հարուստ Հայերից մեծաքանակ դրամ կորզելով «գօրքի կարիքների համար» և կոմիտէի անդամներից մի քանիսին ձերբակալել տալով, սակայն խմբական գաղթը և ամէն տեսակի ջարդեր տեղի չունեցան Այտինի վիլայէթում: Վերջապէս, յունուարի 11-ի Ռէյխստագի նիստի ժամանակ Լիբկնէխտը, Հայերի նկատմամբ, կառավարութեանը մի շատ փափուկ և նեղութիւն պատճառող հարց է տալիս: Պ. դը-Շտումմը, յանուն Կանցլէրի, պատասխանում է. «Կառավարութեանը յայտնի է, որ Բարձրագոյն Դուռը, ի նկատի ունենալով հակառակորդների մի քանի հնարամիտ ոտընձգութիւնները, ստիպուած է եղել Օսմանեան Կայսրութեան մի քանի տեղերից Հայ ազգաբնակչութիւնը գաղթեցնել իրենց տեղերից և բնակութեան նոր վայրեր յատկացնել նոցա: Զեռք առնուած այդ միջոցի մի քանի հետեանքների նկատումներով՝ Գերման և Օսմանեան կառավարութիւնների մէջ հայեացքների փոխանակութիւն են եղել: Աւելի մանրասն տեղեկութիւններ չի տրուիլ»: Այն ժամանակ, երբ Բերլինի համալսարանի արեւելեան լեզուների ուսուցչապետ Կամպֆմէյերը Berliner Tageblatt-ի

էջերում փառաբանում է «Գերման-Թիւրք» յաղթական ապագան, կայսերական կառավարութիւնն իրեն մի քիչ անյարմար դրութեան մէջ է դրուած տեսնում այն ընկերշակութիւնից, որ ուսուցչապետի և ջարդերով տարուած Երիտասարդ-Թիւրքերի մէջ կայ, և որ այնքան մեծ հրճուանք է պատճառում ուսուցչապետին:

Բոստոն լոյս տեսնող մի Հայ լրագիր,—Ազգ, վերջերս հետևեալ տողերն է հրատարակել. «Գերմանիայի պատեօրները և բողոքական աստուածաբանները վերջերս դիմել էին կայսերութեան Վարչապետ Բեթման-Հոլլվեգին, իւր կարծիքն իմանալու Հայաստանի մէջ տեղի ունեցող դրութեան մասին: Վարչապետը պատասխանել էր. «Կայսերական կառավարութիւնը միշտ իւր բարձրագոյն պարտաւորութիւններից մէկն է համարած իւր ազդեցութիւնը գործադրել քրիստոնեայ բոլոր ազգութիւնների նկատմամբ: Գերման քրիստոնեաները կարող են հաւատացած լինել, որ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնուելու վերայ են այդ նպատակով» \*): Այս նկատմամբ Norddeutsche Allgemeine Zei-

\*) Թէև Գերմանական իշխանութիւնները լռութիւն են պահպանում Հայկական ահուկի կոտորածների մասին և Թիւրքիան ուրանում է այդ ամենը, սակայն Գերմանացիք իրենք են խոստովանում այդ և լռութեամբ անցնել չեն կարող այդ անօրինակ (ոճիրների վերայից: Բերլին հրատարակող Allgemeine Mission Zeitschrift բողոքական ամսագիրը, անցեալ նոյեմբեր իւր համարում այդ կոտորածների արձանագրական պատմութիւնն էր կամեցել տալ, առանց որ և է բացատրութիւնների, սակայն կառավարութիւնն այդ համարը գրաւեց: Բայց և այնպէս մի քանի թերթեր ազատուեցան, որից հետևեալ քաղուածներն ենք առաջ բերում.—

«Գերմանական հովանաւորութեան տակ տեղի ունեցած այդ ահուկի գործի նկատմամբ ոչ մի մեղադրական այնքան ահաւոր չէ կարող լինել, քան նոյն իսկ այս վկայութիւնը, որ հանում է Գերման աղբիւրներից:

«Տիգրանակերտի և Մաամուրէթ Իւլ-Ազիզի վիլայէթներում, մայիսի 10—30 ձերբտկալուեցան մօտ 1200 ականաւոր Հայ՝ առանց դաւանութեան խտրութեան: Մայիսի 30-ին, դոցանից 674 հոգի տեղաւորեցին Տիգրիսի վերայ երթևեկութիւն կատարող հա-

tung գրում է. — «Մինչդեռ դաշնակից Պետութիւնները Օսմանեան հպատակ քրիստոնեաներին ապստամբութեան են դրդել ու մղել և մի ծայրահեղ փափուկ դրութիւն

սարակ լաստերի վերայ՝ Մոսուլ փոխադրելու պատրուակով: Վալի փաշայի անձնական թիկնապահը, 50 զինայրի ուղեկցութեամբ, ղեկավարում էր գաղթախմբի առաջ գնալը: Զինայրերից մի մասը լաստերի վերայ էին տեղ դրաւել, իսկ միւս մասը գետափով, հեծեալ առաջ էր գնում միաժամանակ: Գետի մէջ տեղում, մեկնելուց շատ չանցած, ամենքն ևս ենթարկուեցան խուզարկութեան և մօտներն եղած դրամը, մօտ 6000 օսմ. լիրա, խլուեցաւ նոցանից, ապա նոցա, ամենքին ևս, մերկացրին և հերթով գետը թափեցին: Ոմանք աշխատում էին լողալով ափ ելնել, սակայն գետափով առաջացող զինայրերը, ինչպէս իրենց հրամայուած էր, թոյլ չէին տալիս ափն ելնել և գնդակահարում էին փորձ անողներին: — Կողոպտուած այդ հագուստը և անպէտք զգեստները բոլորն ևս ի վաճառ հանուեցան Բասի շուկայում:

«Ամբողջ մի ամիս Եփրատի վերայ լողացող դիակներ էին սահում-անցնում, յաճախ իրար կապկպած, 2—6 հոգի: Տղամարդոց մասը անտանելի տանջանքի հետքեր էին կրում, յօշոտուած (առնատամները կտրած), կանանց դիակները՝ նոյն վիճակի (արգանդները պատռտուած): Եփրատի թիւրքական իշխանութիւնն արգելում էր նոցա թաղումը. ափ ելած դիակները շների բաժին էին դառնում և անգղների կեր: Ականատես վկաներ այս մասին բազմաթիւ են, ամենքն ևս Գերմանացի:

«Բաղդադի գծի մի պաշտօնակատար պատմել է, որ ամեն օր, ցերեկով, Դերեջեկի բանտերը լցում են Հայերով և գիշերները դատարկում Եփրատի ալիքների մէջ: Գերման հեծելազօրի մի կապիտան Տիգրանակերտի և Ուրֆայի ճանապարհի երկայնութեամբ անհամար դիակներ է տեսել անթաղ ընկած, հիւժուած ու կմախքացած:

«Երզնկայի գաղթախմբի առաջին կարաւանը մեկնեց քաղաքից Յուլիս 7-ին, պատմում են Գերման առաքելութեան անդամները: Մեծ մասամբ բաղկացած էին ունեւոր և բարեկեցիկ ընտանիքներից, որոնք կարող էին կառք վարձել: Հաւանօրէն նոքա հասած պիտի լինեն իրենց ուղևորութեան առաջին կայանը՝ Սարբերդ: Յուլիսի 8—10 նորանոր գաղթախմբեր հանուեցան քաղաքից 20—25000 հոգի: Քիչ անց լուր առինք, որ Քրդերը կոտորել են այդ անպաշտպան բոլոր կարաւանը: Յուլիսի 11-ին զօրքեր ուղարկուեցան, իբր պատժելու Քրդերին, բայց Քրդերի

ստեղծել, Գերմանիան ամէն ջանք է թափում Օսմանեան կայսրութեան քրիստոնեաների վիճակը բարելաւելու համար . . . »: — Շատ կցաւէինք, յիրաւի, եթէ ամբողջական պատկերի վերայ այս վերջին գծերը պակաս լինէին:

Վրոխարէն նոցա վրիժառութեան զոհ եղան այն խեղճ ու անպաշտպան կանայք ու երեխաները, որ ազատուել էին Քրդերի ձեռքից: Շատ Հայ կանայք, — պատմել էին ականատես թիւրք զինուորները, — չոքած գթութիւն էին հայցում, սակայն իղուր, շատերը գերադաս էին համարում իրենք իրենց ձեռքով իրենց երեխաներին գետը նետել»:

«Երզնկայի շրջանում, ջարդերից մի քանի օր անց, սկսուեցաւ թագնուած Հայերի մարդկային կանոնաւոր որսը, շրջակայ արտերի մէջ:

«Գերման առաքելութեան անդամներից մէկը պատմեց, թէ ճանապարհին պատահել էր մի զինայրի, որ տեղեկացրեց իրեն, թէ Բաքերդի շրջանի գաղթախումբին ուղեկցել էր ինքը. խմբի մէջ մեծ մասով կանայք և երեխաներ էին, որոնց առաջ էին քշում անխնայ և անընդհատ սպանելով: Օրական 10 — 12 մարդ էր սպանւում և ձգւում անդունդներն ու ձորերը: Երբ փոքրիկները, շոգից նեղուած, այլ ևս քայլելու ոյժ չէին ունենում, նոցա ոտքերից բռնում, գլուխները քարին էին զարկում և փշրուած գանգերով տեղն ու տեղը թողնում. կանանց բռնաբարելը սովորական երևոյթ էր. կողոպտելը՝ պարտականութիւն: Երկրորդ օրը մենք տեսանք մահապարտների այդ մահասարսուռ թափորը: Մէջները միայն երկու տղամարդ էր մնացած: Կանանցից մի քանիսը խելագարուել էին: Երբէք մոռանալու հնար չկայ այդ բազմամբոխ կանանց և երեխաների մէջ կղզիացած տղամարդոց դէմքերը: Խմբի մէջ կային բազմաթիւ գեղձան մազերով և խոշոր, կապոյտ աչքերով անհատներ: Նոցա հայեացքն այլ ևս այս աշխարհից չէր, մի անգիտակից վեհութիւն էր պատել նոցա դէմքերը և կարծէք, հրեշտակների մի խումբ է գնում մահուան: Լռութիւնը թագաւորում էր. քայլում էին լուռ, լուրջ՝ մեծ թէ փոքր. անգոր սլառաւները նստած էին էշերի վրայ, հազիւ պահպանելով իրենց հաւասարակշռութիւնը: Եւ դոքա ամենքն ևս գնում էին հասնելու այն վայրը, ուր իրար կապկպուած՝ պիտի ժայռերից անդունդ գահավիժուէին, Եփրատի ալիքների մէջ հանգիստ գտնելու վերջապէս»:

La Petite Gironde, L'Effroyable Carnage d'Arménie, 14 մարտ. ժընև.

Ման. Հ. քրգ.

Պատերազմի առաջին տարուայ ելքի առթիւ Ռայխս-տագում արտասանած ատենախօսութեան ժամանակ, պետական Վարչապետը շնորհաւորել է Գերմանացիներին, որ «կարողացան Թիւրքիան հիանալի կերպով վերածնել...»։ Վերածնութիւն Գերմանական հասկացողութեամբ, — ջարդեր, աւար, աւեր և բռնաբարութիւններ։ Ճշմարտութիւնն այն է միայն, որ Գերմանիան կարողացաւ շահագործել Թիւրքիան՝ էնվերի, Թալաաթի և «Միութեան և Յառաջադիմութեան» խմբի մի քանի անդամների դաւադրութեամբ. նա աշխատում է քամել նորանից այն ամենը, ինչ որ կարող է հանել յօգուտ գերմանական շահերի, բայց միաժամանակ և նորան դէպի կործանումն է տանում։ Հարիւր հազարաւոր \*) Հայերի ջարդերը Ասիական Թիւրքիայի բոլոր արհեստագիտական և ձեռագործի աշխատանքները, ինչպէս և ամբողջ վաճառականութիւնը սպանեցին. իսկ Օսմանեան կայսրութեան համար տնտեսական մի դժբաղտութիւն, կործանումն է։ Մի անգամ ընդ միշտ ապացուցուած ճշմարտութիւն է, որ Թիւրքի համար կառավարելու ունակութիւն ասածդ՝ կործանելու կարողութիւն է հասկանում նա։ Հայերի այս վիճակը կրկին մի դաս է նոցա համար, որոնք ուզում էին մոռանալ այդ ճշմարտութիւնը։ Եւ դա չէզոքների համար մի նոր, աւելի բարձր յարգի խրատական դաս է տալիս. մի զարհուրելի օրինակով նա իւր բուն իսկ սահմանների մէջ դնում մի հարց, որի համար միլիոնաւոր մարդիկ այսօր մաքառում են և մեռնում։ Գերմանիայի դերագահութիւնը՝ փոքր ազգերի խեղդելու նշանն է, մանր ժողովուրդների ճնշումն է, դա կը նշանակէ ոյժը, բռնեցքը ամեն տեսակ բռնակալութեան և բռնութեան սպասաւոր դարձնել, միայն թէ այդ լինի յօգուտ Գերմանիայի և իւր վաճառաշահութեան. կարգապահութիւն՝ Գեր-

\*) Թուերը շատ անճիշդ են։ Լրագրների մէջ յիշատակուած էր 850,000։ Այդ թիւն, անշուշտ, չափազանցեցրած է, սակայն կարող է 500,000 հասնել։ Եւ չպէտք է մոռանալ, որ կոտորածները դեռ շարունակւում են։

մանիայի համար, նշանակում է թոյլերի բերանը փակել: Եւ ընդհակառակը՝ Դաշնակիցների յաղթութիւնը, կազմակերպութիւն ստացած ամեն տեսակի և ինքն իւր յարգն զգացող ազգութեան յարգանքով վերաբերելու հաւաստիքն է այդ, յարգանք ազգութիւնների կամքի և իրենք-իրենց արամադրութեան տակ լինելու իրաւունքի, որովհետև ուժեղների համար առաւել բարձր, առաւել մարդկայնօրէն և քրիստոնէաբար ըմբռնելու մի պարտիք չկայ, քան թոյլերի գանգատը լսել. կարգապահութիւն՝ Դաշնակիցների համար, նշանակում է՝ ոյժը, արդարագատութեան սպասաւորը դարձնել:

\*\*\*

Թրգ. Տիրայր ծ. վարդապետ

— ❧ ❧ —

## Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն

Տրապիզոնը հիմնուած է Սինօպից ելած գաղթականութեան ձեռքով 750 թ. Ք. ա.: Ըստ աւանդութեան նորանից ոչ շատ հեռու է անցնում այն ճանապարհը, մօտ 50 վերստ, որով Քսենեֆոնտը իւր 10.000 էր առաջնորդում:

Հռոմէական Կայսրութեան մաս դառնալով Տրապիզոնը Pontus Polemoniacus նահանգի գլխաւոր քաղաքը դարձաւ, համարւում էր ծովային վաճառաշահ մի կենդրոն և Հռոմէական նաւատորմի Սև-ծովի ոյժերի գլխաւոր կայանը: Այդ բանին շատ էր նպաստում նորա գեղեցիկ բնական պաշտպանութեամբ օժտուած նաւահանգիստը:

ԺԳ. դարից սկսած Տրապիզոնը դարձաւ համանուն Յունական փոքրիկ մի պետութեան մայրաքաղաքը: Այդ հեռաւոր աշխարհամասի-թեմի կառավարիչներին շատ անգամ է յաջողուել, ապաւինած իրենց սեփական ոյժերի վերայ, կատարեալ անկախութիւն ձեռք բերել: Այդ պետութիւնը կառավարում էր Կօմնենների հարստութիւնը: ԺԵ դարում այդ հարստութիւնը բոլորովին այլասերուեցաւ: Պալատը դարձաւ զարհուրելի ոճիւրների մի վայր, անբնական ախտերի և կատարեալ բարոյական անկման